

ՄԵՆՔ ԱՍԾՈՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐՆ ԵՆՔ

Ի՞նչ է Նշանակում Հետևել Հիսուսին

Մաս 3

«Այնպես էլ շատերս մեկ մարմին ենք Քրիստոսումը, բայց ամեն մեկը միմյանց անդամ ենք:» Հռովմայեցիս 12:5

«Ուրեմն քանի որ ժամանակ ունենք, բարի գործենք ամենին, մանավանդ հավատքի ընտանիներին:»

Գաղատացիս 6:10

1- Առաջին (Երուսաղեմի) եկեղեցու աճը

Գործք 1:15 *«120 հավատացյալ»*

Գործք 2:41 *«այն օրը երեք հազարի չափ հոգիք ավելացան:»*

Գործք 2:47 *«և Տերն ամեն օր փրկվածներին ավելացնում էր»*

Գործք 4:4 *«մարդկանց համարը հինգ հազարի չափ եղավ.»*

Գործք 5:14 *«և առավել ևս շատանում էին հավատացյալները.»*

Գործք 5:28 *«և ահա երուսաղեմը լցրիք ձեր ուսմունքովը.»*

Գործք 6:1 *«և այն օրերումն աշակերտները շատացան.»*

Գործք 6:7 *«աշակերտների համարը խիստ շատանում էր.»*

Գործք 21:20 *«քանի բույրավոր հավատացյալ կան.»*

2- Որտեղ էին նրանք հավաքվում

«Եվ բոլոր օրը չէին դադարում տաճարումը և տներումը սովորեցնել...» Գործք Առաքելոց 5:42

- Պաշտամունք՝ մեծ խմբով

«Ամեն օր միաբանությամբ տաճարումն էին լինում...»

Գործք 2:46

- Հաղորդակցություն՝ փոքր խմբերով

«Եվ նրանց տանը լինող եկեղեցուն.» Հռովմայեցիս 16:5

Առավելություններ: Տունները

- Ունեն մտերիմ մտնողորս
- Հարմարվողական են
- Կարելի է ընդարձակել
- Խնայողական են

Առողջ Խմբի Յոթ Նշանները: Գործք Առա 2:42-47

1. Մենք ուսումնասիրում ենք Աստվածաշունչը՝ միասին

«Եվ միշտ հետևում էին առաքյալների վարդապետությանը...»

2. Մենք ուրախանում ենք՝ հաղորդակցելով միմյանց հետ

«Եվ բոլոր հավատացյալներն իրար հետ մեկտեղ էին.»

«Ուրախությունով և սրտի միաստությունով կերակուր էին ուտում.»

3. Մենք հաղորդություն ենք ընդունում միասին

«Եվ միշտ իրար հետևում էին...հացի կտրելին.»

4. Մենք աղոթում ենք միմյանց համար

«Եվ միշտ իրար հետևում էին...աղոթքներին.»

5. Մենք օգնում ենք միմյանց գործնականորեն

«Բաշխում էին այն ամենին, ում ինչ բան որ պետք էր լինում.»

6. Մենք պաշտում ենք Աստծուն միասնաբար

«Աստծուն օրհնում էին, և բոլոր ժողովրդի առաջին շնորհք ունեին.»

7. Մենք հրավիրում ենք ուրիշներին եկեղեցի

հաճախելու

«Եվ Տերն ամեն օր փրկվածներին ավելացնում էր եկեղեցու հետ:»